ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(12)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№2(12)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№2(12)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(12)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դրամագիտություն

Ալեքսանդր Հակոբյան

Արխիպելագից դեպի մայրցամաք. «Հայաստանի դրամագիտություն» հասկացության շրջանակը (*ռուս.*) 8

Ժակ Նուրպեկրլեան

Հին դրամների՝ պատմական և աշխարհագրական տեղեկությունները ստուգելու ունակությունը (*անգլ.*) 23

Հասմիկ Մարգարյան

Հայաստանի անձնավորումը Պարթևական հաղթակամարի վրա՝ ըստ Օգոստոս կայսեր մ. թ. ա. 19 – 16 թթ. հաղթադրամների (*ռուս.*) 27

Մաքսիմ Եվադեան

Հայոց թագուհի Էրատոյի մասին. պատմական և դրամագիտական ուսումնասիրություն (*անգլ.*) 38

Մաքսիմ Եվադեան, Հովանն Սիմոնեան

Մարիամ Կարսեցու չհրապարակված կնիքը և Բագրատունիների տան՝ Դավիթյան ծագման հավակնությունը (*անգլ.*) 47

Շահէն Յովսէփեան

Պարսկական դրամներ՝ թողարկված Երևանում (*հայ.*) 55

Ռոբեն Վարդանյան, Արմինե Զոհրաբյան, Համլետ Պետրոսյան

Դրամներ Արցախի Տիգրանակերտի պեղումներից (*հայ.*) 74

Ռոյ Առաքելյան

Ակնարկ Տիգրան II-ի դրամական թողարկումների ժամանակագրության մասին (*անգլ.*) 87

Մեյեդ Օմիդ Մոհամմադի, Սաիդ Սոլեյմանի

Հատվել է Իրանի Հյուսիսում. «Մուհր» մակադրոշմներ արծաթե դրամների վրա (*անգլ.*) 95

Վեռա Բոյան

Հայաստանից գտնված Հնդկաստանի Մեծ մողոլների դրամները և դրանց դերը միջազգային առևտրում (*հայ.*) 106

Վլադիմիր Գորոնչարովսկի, Անդրեյ Տերեշչենկո

Տավրիկյան Խերսոնեսի հարավային արվարձանում հայտնաբերված՝ բյուզանդական կայսր Արտավազդի հազվագյուտ սեմիսի մասին (*ռուս.*) 114

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր Հակոբյան, Լուսինե Ղուշչյան

Մետաղադրամը իրերի վրա. Ռուսաստանի ազգագրական թանգարանի հավաքածուից չորս հայկական զարդերի դրամագիտական վերլուծություն (*անգլ.*) 122

Աստղիկ Իսրայելյան

Դրամների մոգական և գեղագիտական արժեքները (*հայ.*) 132

Արտակ Ասատրյան

Պղնձարդյունաբերությունը և պղնձագործությունը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին – 20-րդ դարի սկզբին (Պատմաազգագրական համառոտ ուրվագիծ) (*հայ.*) 152

Լիլիա Ավանեսյան, Վեռա Բոյան

Գորգը և տեքստիլ ապրանքները Ռուսաստանի հետ հայ վաճառականների առևտրում 17-րդ դարի կեսին – 18-րդ դարի սկզբին (*ռուս.*) 166

Կարինե Բազեյան, Գրիգոր Աղանյան

Մետաղադրամը որպես զարդ Բարձր Հայքի և Շիրակի կանանց ավանդական հագուստի համալիրում (*հայ.*) 180

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Մանուչարյան

Դրամական անվանումների արտացոլումը հայկական վիմագրերում (*հայ.*) 190

Արմինե Ջոհրաբյան, Բորիս Գասպարյան, Անի Ադիգյոզալյան

Կշռաքար՝ հայտնաբերված Արտաշատ մայրաքաղաքի տարածքից (*հայ.*) 206

Ռոբերտո Դան, Անանարիտա Ս. Բոնֆանտի

Նախնական դիտարկումներ Հայաստանի պատմության թանգարանում պահվող Ուրարտական թագավորական թասերի նոր ուսումնասիրության մասին (*անգլ.*) 217

Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի, Արսեն Բոբոխյան, Գագիկ Սարգսյան, Լևոն Մկրտչյան

Ճանապարհային ցանցի գործարկումը բրոնզ-երկաթեդարյան Սյունիքում՝ խոշոր բնակավայրային ագլոմերացիաների գոյության պայմաններում (*հայ.*) 225

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Ժիրայր Քրիստրիանեան

Ռոբերտ Վ. Էդվարդսի հայկական և հարակից մինչհետմիջնադարյան ժամանակաշրջանի դրամների հավաքածուն՝ Կիլիկիայում գտածոների վայրերի փաստագրված տվյալներով (*անգլ.*) 242

Ռոբեն Վարդանյան, Արմինե Ջոհրաբյան, Հասմիկ Հովհաննիսյան

Ոչ թանգարանային դրամագիտական թվային շտեմարան թանգարանում (*հայ.*) 260

Զարուհի Բարսեղյան

«Պահպանելով անցյալը և ներկայացնելով ներկան՝ կառուցում ենք ապագան». ՀՀ կենտրոնական բանկի այցելուների կենտրոն (*հայ.*) 267

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 271

DOI:10.56653/18290361-2023.12-180

Կարինե Բազեյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
bazeyan60@yandex.ru

Գրիգոր Աղանյան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
aghanyan@mail.ru

ՄԵՏԱՂԱԴՐԱՄԸ ՈՐՊԵՍ ԶԱՐԴ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ԵՎ ՇԻՐԱԿԻ ԿԱՆԱՆՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏԻ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ*

Հիմնաբառեր. Բարձր Հայք, Շիրակ, ավանդական հագուստ, մետաղադրամ, գլխազարդ, վզնոց, կրծքազարդ:

Ներածություն

Մետաղադրամների ի հայտ գալուն պես ողջ քաղաքակիրթ աշխարհում դրանք սկսեցին օգտագործվել որպես զարդ: Մետաղադրամի կամ դրա նմանակի օգտագործումը որպես զարդարման ձև՝ համընդհանուր երևույթ է և հանդիպում է տարբեր ժողովուրդների մշակույթներում: Մետաղադրամներով զարդեր պատրաստելու եվրոպական ավանդույթը սկիզբ է առել հին ժամանակներից: Հելլենիստական դարաշրջանում և Հռոմեական կայսրությունում մետաղական դրամի գործածմամբ բոլոր հայտնի զարդերը՝ մատանիները, կրծքազարդերը, մանյակներն արդեն տարածված էին: Կախազարդերը հայտնվել են մ.թ.ա. 1-ին դարում, իսկ 2–3-րդ դդ. դրանք դարձել են կանանց սիրելի զարդերը (Калинина 2015, 36–37):

Ավանդական մշակույթում մետաղադրամները հնուց կրում էին յուրատեսակ տեղեկատվական գործառույթ – շատ ժողովուրդների մեջ դրանք խորհրդանշում էին հաստատունություն, կայուն բարեկեցություն, պտղաբերության բարեմաղթություն:

Տարբեր երկրների մետաղադրամները, որոնք զարդարում էին կանանց հարսանեկան հագուստը, խորհրդանշում էին հարսնացուի և նրա ընտանիքի արժանապատվությունը, ամուսնության օրինականությունն ու հեղինակությունը, ընտանեկան կապերի ամրության ցանկությունը՝ միաժամանակ ծառայելով որպես հմայական պահպանակ: Դրամները կարվում էին հագուստի տարբեր մասերում, մտնում հանվող զարդերի կազմության մեջ (Островский, Ратникова 2019, 5–7):

Մետաղադրամների վերոնշյալ հատկանիշներից ելնելով՝ ի սկզբանե դրանց բնորոշ են փոխանվանականները (մետոնիմիա). օրինակ՝ Բարձր Հայքում զույգ-

* Ստացվել է 24.07.2023 թ., ուղարկվել է գրախոսման 29.07.2023 թ., ընդունվել է տպագրության 01.11.2023 թ.:

շերտ (ջուխտշերիտ) ճակատակապի մեջտեղում կախվում էր «Նապոլեոն» կոչվող ոսկեդրամը. սա Նապոլեոն Բոնապարտի ժամանակ հատված քառասուն ֆրանկանոց ոսկեդրամն է, որը հայտնի է նաև Նապոլեոնադոր անվամբ:

Մետաղադրամների գեղագիտական հատկանիշներն առավել վառ դրսևորվում ու արտահայտիչ են դառնում, երբ ներառվում են հագուստի ու աքսեսուարների մեջ: Դրանց փոխաբերական իմաստային հատկանիշները, որոնք բնորոշ են ավանդական մտածելակերպ կրողներին, հասկանալի են դառնում միայն հետազոտելով մետաղադրամների դերը հավատալիքներում, ծեսերում և հագուստում. Մասնավորապես, թե հագուստի որ մասում և ինչպես են ամրացված, ինչի հետ են համադրված, գլխի կամ մարմնի որ մասին են դրանք համապատասխանում: Հագուստի այն մասերն ու զարդերը, որոնց կոմպոզիցիոն կառուցվածքում ներառված են մետաղադրամները, ունեն նշանային գործառույթի մի քանի դրսևորում, որոնք ենթարկվում են հագուստի խորհրդանշանային ընդհանուր օրինաչափություններին:

Մետաղադրամների առկայությունը կարող է արտահայտել սոցիալական իմաստ.

- ցուցադրել հարստությունը (մեծ քանակությամբ դրամների դեպքում)
- ցույց տալ հեղինակավոր սոցիալական խմբին պատկանելությունը
- որոշակի տիպի զարդերի հետ միասին՝ մատնանշել որոշակի սեռատարիքային խմբին պատկանելը:

Միաժամանակ մետաղադրամները կրում են նաև կախարդական-հմայական իմաստ.

- ծառայում են որպես պահպանակ՝ շնորհիվ մետաղի, նրա փայլի ու շարժման ժամանակ արձակած ձայնի, սրբերի (օր. վենետիկյան դուկատի վրա պատկերված էր սբ. Մարկոս ավետարանիչը), թագավորների, զինանշանային արծվի պատկերների և, որ պակաս կարևոր չէ, պայմանավորված նրանով, թե որտեղ են դրանք տեղակայված՝ ճակատին, քունքերի վրա, օձիքին, հագուստի բացվածքներին և այլն
- արտահայտում են հարստության ու պտղաբերության մաղթանք՝ երիտասարդ, ամուսնացած կնոջ հագուստում դրա մեծ քանակության առկայության դեպքում (Островский, Ратникова 2019, 5–7):

Մետաղադրամները, որոնք ներառվում էին զարդերի կազմում, ընտրվում էին անկախ նրանից, թե որ երկրի ծագում ունեն, կամ որ ժամանակաշրջանի թողարկման են: Ընտրության ժամանակ գլխավորապես հաշվի էին առնում դրամի նյութը, չափը և դիմերեսի ու դարձերեսի պատկերները:

Մետաղադրամներով զարդերը լայն տարածում ունեին նաև հայոց մեջ և տարածված էին պատմական Հայաստանի բոլոր պատմազգագրական մարզերի, այդ թվում նաև Բարձր Հայքի (Շիրակ, Ջավախք) կանանց ավանդական հագուստի համալիրում (Ավագյան 1983, 71–76): Մետաղադրամների շրջանաձևությունն ու համեմատաբար փոքր չափերը շատ հարմար էին դրանք որպես զարդ կիրառելու համար: Հայ կանանց ավանդական հագուստի համալիրում մետաղադրամները

գերազանցապես գլխի հարդարանքի մաս էին կազմում, ինչպես նաև սիրված կրծքազարդ էին՝ հատկապես ունևոր ընտանիքներում:

Ի տարբերություն Հայաստանի մյուս պատմազգագրական մարզերի, որտեղ կիրառական էին հիմնականում արծաթե դրամները, Բարձր Հայքում օգտագործվում էին առավելապես ոսկե դրամներ: Ոսկեդրամները կանանց գլխի հարդարանքի պարտադիր բաղադրիչ էին և գլխազարդի մյուս մասերի հետ կազմում էին մեկ միասնություն ու բնորոշ էին միայն այս տարածաշրջանին: Բազմաթիվ ճանապարհորդներ, գրողներ և այլք, որոնք եղել են Բարձր Հայքում ու հատկապես քաղաքային բնակավայրերում, հիացմունքով են նկարագրել տեղի կանանց շքեղ ու հարուստ, գեղեցիկ ու ճաշակով հագուստը, այդ թվում նաև այն ամբողջացնող գլխի հարդարանքը:

Հասկանալի է, որ այն մանրամասն նկարագրվել ու հետազոտվել է նաև ազգագրագետների կողմից, սակայն հագուստի համալիրում մետաղադրամների օգտագործման, դրանց դերի ու նշանակության մասին ուսումնասիրություն մինչ օրս չի կատարվել: Սույն հոդվածում փորձ է արվում թանգարանային հավաքածուների, մասնագիտական գրականության, լուսանկարչական ու արխիվային նյութերի հիման վրա ներկայացնել Բարձր Հայք-Շիրակյան կանանց ավանդական հագուստի մետաղադրամներից կազմված զարդերը, դրանց գործառույթներն ու իմաստաբանական նշանակությունը, ելնելով վերը շարադրված դրույթներից:

Մետաղադրամները Բարձր Հայքի կանանց հագուստի համալիրում

Բարձր Հայքի կանանց ավանդական տոնական հագուստի վերնազգեստը և հատկապես թավիշից կարվածը, առանձնանում է ոսկեթել ասեղնագործ հարդարանքով, որն անցնում է դրա եզրերով, զարդարում թևաբերաններն ու կրծկալը, գոգնոցը: Ոսկե կամ ոսկեգույն մետաղադրամներով կազմված գլխի հարդարանքը լրացնում և ամբողջացնում էր հագուստը:

Գլխի հարդարանքը բաղկացած էր թավշյա, ոսկեթել բանվածքով գդակից կամ մահուդե ծոպազարդ գլխարկից, որը կոչվում էր «ֆես»: Ազգագրագետ Երվանդ Լալայանի նկարագրությամբ «Ֆեսի վրա կապում էին զիլիֆլըղը՝ երկու շարք մարգարիտներ, որ այտերի վրայից իջնում է մինչև կուրծքը: Յուրաքանչյուր շարքը բաղկացած է 4–6 առանձին թելերից, մարգարիտներ անցկացրած և ծայրը մի փոքրիկ ոսկեդրամ (պաճախլի) կապած: Շարժվելիս այս ոսկիները միմյանց են դիպչում և ձայն հանում: Աղքատ գյուղացիները մարգարիտների և ոսկիների փոխարեն սուտ մարգարիտներ և փուլ (ոսկեգույն մետաղից) են անում: Զիլիֆլըղի վրայից կապում են շերիտը. սա մի դեղին ժապավեն է. վրան մի կամ երկու շարք, 20 մինչև 200 փոքրիկ ոսկեդրամներ (ուռուպիա) կարած, որ պսպղում են ճակատի վրա, տարածվելով մի ականջից մինչև մյուսը: Ոսկիների տակից, շերիտի մեջտեղը կարած է լինում մի մեծ ոսկի (մահմուդիա): Պառավներն այս ոսկին չեն դնում» (Լալայան 1896, 228–229):

Ինչպես տեսնում ենք, մեծ ազգագրագետը նկատել է ոսկեդրամի փայլն ու շարժման ժամանակ ձայն հանելը, որոնք չարխափան ու պաշտպանական նշանակություն ունեին:

Հատկանշական է, որ ինչպես ողջ հագուստի համալիրը, այնպես էլ գլխի հարդարանքը նորահարսը սկսում էր կրել հարսանիքի օրվանից: Հասմիկ Գյոլեցյանը, որ իր հիշողություններում նկարագրել է ալեքպոլյան ավանդական հարսանիքը, հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում ինչպես գլխի հարդարանքի, այնպես էլ ընդհանրապես հարսնացուին նվիրված զարդերի մասին: Մասնավորապես նա գրում է. «Հարսի համար տանում էին ջուխտ շերիտ (շերիտ-կոշտ կտորից հաստ ժապավեն, որի վրա կարվում էին ոսկիները) ոսկի մոտ 70 հատ, եթե հարուստ էին 100 – 120 հատ, ջավշակ (փոքր ոսկիներ, (տասնոց), որոնք շարված են լինում մարգարիտների հետ), ամուսնական մատանի (կալցո), «բեյի մատնիքը», անպայման բախչալի: Շերիտների մեջտեղը և երկու ծայրերին տեղավորված էին մայմուդյա – մեծ ոսկի, կամ նապոլեոն (կամ քրիմիցա), տանձաձև ոսկի, յուրաքանչյուր ծայրում՝ 1 – 2 հատ: Տասնոցը թուրքական ոսկեդրամ էր՝ 1-ից 2 ռ. արժողությամբ, մայմուդյան՝ 5 ռ., իսկ տանձաձև ոսկին և քրիմիցան-25 ռ.: Բացի ջուխտ շերիտ ոսկուց հարսին տանում էին փերուշան՝ մարգարիտներ շարված:» Հ. Գյոլեցյանը նշում է նաև, որ «Նշանդրեքին տանում էին զարդերի մի մասը միայն՝ նշանի մատանին, «բեյի» բախչալի մատանին, ունևորները նաև ոսկե ժամացույց, նշանդրեք գնացող բարեկամների նվերներից: Տանում էին ընդհանրապես մատանիներ, իսկ մնացած զարդերը տանում էին հարսանիքին» (Գյոլեցյան 1976, 21 – 22):

Բացի գլխի հարդարանքից, ոսկեդրամները լայնորեն օգտագործվում էին նաև շարանների ձևով՝ որպես վզնոց, մանյակ, որը Հ. Փափազյանն անվանում է շարոց, նկարագրելով այսպես. «Ոսկիներու շարան, մեջտեղը խոշոր ոսկե դրամ (շարոցի ոսկիները ավելի խոշոր են, քան ճակտինը) կամ ոսկիին վրայ ձուլած գարիի ոսկի հատիկներ, ոսկի փոքր կոճակով կոճկված, պարանոցին մի քանի շարք մարգարիտ ոլորված:» (Փափազյան 2002, 99)

Ազգագրագետ Նազիկ Ավագյանը ևս Բարձր Հայքի կանանց զարդերի թվում նշում է մեկ, երկու կամ երեք շարքով վզնոց-ոսկիների շարանը, որը «աղջիկները նվեր էին ստանում հարսանիքի նախօրյակին՝ ճակտնոց-շերիտի հետ միասին» (Ավագյան 1983, 93):

Ազգագրագետ Վարդ Բդոյան էլ, հղում անելով Ե. Լալայանին, հավելում է, որ աղջիկներն ու մատաղահաս կանայք էին հատկապես կրում կրծքներին մի կամ մի քանի շարք ոսկիներ (Բդոյան 2014, 254):

Ալեքսանդրապոլ-Շիրակի գլխազարդերում և վզնոց-կրծքազարդերում օգտագործված մետաղադրամները

Շիրակում որպես զարդ գործածվող վերը հիշատակված և մի քանի այլ մետաղադրամների մասին բացառիկ հետաքրքիր ու արժեքավոր տեղեկություններ է թողել Ն. Նիկողոսյանը, դրանք ներկայացնելով որպես կանանց զարդեր՝ նշելով յուրաքանչյուրի նախապատերազմյան (1913 թ.) գները, հետո դրանք թվարկելով ու նկարագրելով բառարանում «ոսկեղեն զարդեր» անունով: Դրանք են. «Մահմուդիա-արժեր 8 ռ. 85 կոպ. Կիսնոց – 4 ռ. 45 կ., Ճակատի ոսկի քսաննոց – 2 ռ. 40 կ., Տասնոց – 1 ռ. 20 կ., Ուռուպիա – 1 ռ., Գրիմիցա 92% – 19 ռ. – 22 ռ., Տաճկական լիրա – 8 ռ. 40 կ., արծաթ մեջիդիա – 1 ռ. 40 կ.:» (Նիկողոսյան 1935, 7363):

Բառարանում հեղինակը տալիս է նաև որոշ զարդերի տեղական, բարբառային անունները և վերը հիշատակված ոսկեդրամների՝ որպես զարդ գործածության ձևերն այսպես. բողմաղ-մանյակ, պարանոցի զարդ ոսկուց կամ արծաթից, գրիմիցա-ավստրիական ոսկի, որ կանայք գործ էին ածում որպես զարդ, կախելով այն մահմուդիա ոսկիների մեջտեղը, մահմուդիա-թուրքական մեծ ոսկի, գործ էյին ածում որպես զարդ մանյակի համար, սրտանոց-մանյակ, վզնոց-կրծքազարդ, մանյակ, բողմաղ, փուլ-դեղին հասարակ մետաղ, որ չքավոր կանայք իբրև զարդարանք ճակատներին էին կապում:

Այսպիսով, ըստ ազգագրական նյութերի և ձեռագիր աղբյուրների Բարձր Հայք-Շիրակյան կանանց ավանդական հագուստի զարդահամալիրում 19 – 20-րդ դարասկզբին օգտագործվող ամենատարածված մետաղադրամներն էին.

- **գրիմիցա** (այս և հաջորդ ընդգծումները հեղինակներինն են) – ավստրիական մեծ ոսկեդրամ՝ 4 դուկատ, որը հատվում էր 0.986 հարգի «Dukaten-gold» կոչվող ոսկուց;
- **մահմուդիա** կամ **մայմուդյա** – թուրքական մեծ ոսկի;
- **Նապոլեոն** – Նապոլեոն Բոնապարտի կառավարման տարիներին հատված քառասուն ֆրանկանոց ոսկեդրամ;
- **Ուռուպիա** կամ **ռուպիա** – տաճկական հին ¼ ոսկեդրամ, «որը կանայք ծակում էին, շարում թելի վրա և իբրև զարդ կախում ճակատներին» (Հայոց լեզվի բարբառային բառարան 2008, 239): Ըստ Ն. Ավագյանի «ուռուպիայի այլ տեսակները կոչվում էին քյարթմալի և քսանօխտանոց, որոնցից ավելի որակով էր համարվում վերջինը» (Ավագյան 1983, 108):
- **կիսնոց** – հին օսմանյան փոքր ոսկեդրամ:

Ինչպես տեսնում ենք, գրեթե բոլոր մետաղադրամները, որոնք հասանելի էին 19-րդ դարավերջին – 20-րդ դարասկզբին, օգտագործվել են դեկորատիվ նպատակներով, բացառությամբ կանոնավոր հատման ռուսական ոսկե մետաղադրամների, որոնց օգտագործման արգելքը պայմանավորված էր դրանց բարձր արժեքով և դրամական միավորների մասին օրենքով սահմանված խիստ կանոններով: 19-րդ դ. կեսին Ռուսաստանում օրենք էր ընդունվել, որն արգելում էր դրամների օգտագործումը ոսկերչական իրերում, ինչպես նաև դրանց վնասելն ու հալելը, որի խախտումը խստագույնս պատժվում էր և համարվում քրեական հանցագործություն:[1] Ընդհանուր առմամբ, պետությունն արգելում էր փչացնել Ռուսական կայսրության ցանկացած այլ մետաղադրամ, բայց արծաթե մետաղադրամները ակտիվորեն օգտագործվում էին տարբեր ժողովուրդների կողմից, ինչը վկայում են թանգարաններում գտնվող բազմաթիվ արտեֆակտներն ու պահպանված իրերը (Рашитов 2021, 70):

Քանի որ դրամաշարով գլխազարդերը պարտադիր էին, Ջավախքում և Շիրակում, հատկապես չունևոր բնակչության շրջանում, իրական մետաղադրամների

1 Ռուսական կայսրությունում արգելված էր նաև այսպես կոչված restrike-ների (ռուսերեն новодел) թողարկումը: Ռեսթրայքը դրամանման նշան է, որը հատվում է գոյություն ունեցող մետաղադրամի նախատիպի նմանությամբ՝ հիմնականում նումիզմատ կոլեկցիոներների համար:

փոխարեն լայնորեն օգտագործվում էին մի երեսանի դրամական նմանակներ կամ, ինչպես հիշատակվեց վերը՝ «փուլեր»: Սրանք պատրաստվում էին ղարաղոյումչիների (հասարակ մետաղից զարդ պատրաստողների) կողմից, որոնք որպես հումք օգտագործում էին այսպես կոչված վարշավյան արծաթ, մելքիոր և լատուն: Փուլերի երևացող մասում արվում էին օսմանյան ղուռուշների դիմերսին նմանակող արաբերեն տառեր, աստղեր, կիսալուսիններ կամ պարզունակ բուսանախշեր:

Եզրակացություն

Տղամարդու սոցիալական կարգավիճակը՝ հիմնված ընտանեկան հարստության և անձնական ֆինանսական բարեկեցության վրա, հայկական քաղաքային միջավայրում կարող էր դրսևորվել բացառապես նրանով, թե որքան հարուստ տեսք ունեն նրա ընտանիքի կանայք: Տղամարդկանց հագուստի խստությունն ու համեստությունը՝ տղամարդկանց համար թույլատրելի նվազագույն զարդարանքների հետ մեկտեղ, փոխհատուցվում էր իր ֆինանսական և սոցիալական դիրքը կանանց տարազի համալիրում ներկայացնելու հնարավորությամբ, որը, ինչպես տեսանք, ներառում էր բազմաթիվ զարդեր:

Ոսկե ու արծաթե մետաղադրամները լայն տարածում ունեին պատմական Հայաստանի բոլոր պատմազգագրական մարզերի, այդ թվում նաև Բարձր Հայքի (Շիրակ, Ջավախք) կանանց ավանդական հագուստի համալիրում, քանի որ մետաղադրամների շրջանաձևությունն ու համեմատաբար փոքր չափերը շատ հարմար էին դրանք որպես զարդ կիրառելու համար:

Բարձր Հայքի կանանց ավանդական հագուստի համալիրում մետաղադրամները գլխի հարդարանքի պարտադիր բաղկացուցիչ էին, ինչպես նաև սիրված վզնոց ու կրծքազարդ՝ հատկապես ունևոր ընտանիքներում: Ցանկացած առևտրականի կամ արհեստավորի կնոջ, դստեր կամ հարսի հագուստում թանկարժեք մետաղադրամներից պատրաստված զարդերի առատությունը այդ տղամարդկանց համար պատվախնդրության հարց էր: Հատկանշական է, որ նույնիսկ եվրոպական հագուստ կրելիս էլ շատերը շարունակում էին ոսկեդրամներից բաղկացած շարաններն օգտագործել որպես կրծքազարդ:

Այսպիսով, թանկարժեք մետաղից հատված դրամները կարևոր սոցիալական գործառույթ էին իրականացնում՝ դառնալով հարստության և բարեկեցության խորհրդանիշ, ուստի դրանցով կանանց հագուստի հարդարումը ցույց էր տալիս կրողի կարգավիճակն ու բարձրացնում ինչպես իր, այնպես էլ ամուսնու ու ողջ ընտանիքի հեղինակությունը: Մետաղադրամներով զարդեր կրելն այնքան արմատացած էր ալեքպոլցիների և շիրակցիների կենցաղում, որ միջին ու ցածր եկամուտ ունեցող ընտանիքների կանայք հյուր գնալիս հարևանից վերցնում էին գլխի երկշերտ ճակատնոցը և մեծ ոսկիով շղթան, որն իր ժամանակ շատ սովորական բան էր համարվում:

Մետաղադրամները ծառայում էին նաև որպես պահպանակ՝ շնորհիվ մետաղի, նրա փայլի ու շարժման ժամանակ արձակած ձայնի, ինչպես նաև արտահայտում էին հարստության ու պտղաբերության մաղթանք՝ հատկապես երիտասարդ

կանանց հագուստում: Դրանով էր պայմանավորված այն, որ Բարձր Հայքում ոսկեդրամներով գլխի հարդարանքն ու կրծքազարդերը տրվում էին նորահարսին հարսանիքից անմիջապես առաջ:

Վերը թվարկված բոլոր գործառույթներից բացի, տարբեր երկրների մետաղադրամների առկայությունը Բարձր Հայք-Շիրակի կանանց հագուստի համալիրում ներկայացնում էր նաև տարածաշրջանի բնակչության առևտրական, պատմամշակութային պարբերական բնույթ կրող կապերն ու հարաբերությունները, որոնք դարեր շարունակ գոյություն են ունեցել ոչ միայն հարևան, այլև հեռավոր երկրների հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբնաղբյուրներ

ԳՅՈԼԵՑՅԱՆ 1976 – Գյոլեցյան Հ., չհրատարակված, Գյումրի (Ալեքսանդրապոլ, Լենինական), տետր 2, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, գործ 4/99:

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ 1935 – Նիկողոսյան Ն., չհրատարակված, Լենինական, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, գործ FF II:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆ 2008 – Հայոց լեզվի բարբառային բառարան, գլխ. խմբ.՝ Ա. Սարգսյան, Հատոր 5, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 2008:

Գրականություն

ԱՎԱԳՅԱՆ 1983 – Ավագյան Ն., Հայկական ժողովրդական տարազը (19-րդ դ. – 20-րդ դ. սկիզբ), 1983:

ԲԴՈՅԱՆ 2014 – Բդոյան Վ., Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը, Երևան, 2014:

ԼԱԼԱՅԱՆ 1896 – Լալայան Ե., Ջավախք. Ջգեստ և զարդ, Ազգագրական հանդէս, Գիրք Ա., Շուշի, 1896, էջ 227 – 231:

ՓԱՓԱԶԵԱՆ 2002 – Փափազեան Հ., Հայկական տարազ, Երևան, 2002:

КАЛИНИНА 2015 – Калинина О. В., Монеты и монетовидные подвески эстонских крестьянок в 19-ом веке, Музей. Традиции. Этничность, СПб., 2015, № 1 (7), сс. 36 – 49.

ОСТРОВСКИЙ, РАТНИКОВА 2019 – Островский А. Б., Ратникова А. В., Монеты в предметном мире традиционной культуры. Монеты в народной одежде и украшениях, Российский Этнографический музей, С.Пб, 2019, сс. 5 – 7.

РАШИТОВ 2021 – Рашитов Д. Д. Монеты как украшение и элемент традиционного костюма татар в XIX – XX вв. Человек и культура, Москва, 2021, № 5, сс. 66 – 87. DOI: 10.25136/2409-8744.2021.5.33350

Karine Bazeyan
PhD

Shirak Center for Armenological Studies of NAS RA
bazeyan60@yandex.ru

Grigor Aghanyan
Institute of Archaeology and Ethnography NAS RA
aghanyan@mail.ru

A COIN AS AN ORNAMENT IN THE COMPLEX OF TRADITIONAL CLOTHES OF THE WOMEN OF BARDZR HAYK AND SHIRAK

Keywords: Bardzr Hayk, Shirak, traditional costume, coin, forehead, adornment, necklace.

The article studies the historical and cultural component of coins in the traditional female garments of the historical and ethnographical region of Armenia – Bardzr Hayk-Shirak. We especially studied the headdresses and breast adornment of the Armenian women from the end of the 19th century to the beginning of the 20th century. They used gold European coins, gold and silver Turkish coins, as well as coin-type tokens as a decorative element.

The methodology of the study is based on the combination of the general scientific and private methods of research, and the most importantly, cultural analysis. The source of the research includes museum collection, as well as eyewitness testimony in their private research. Scientific novelty of the work lies in the thematic selection of sources and information, analysis and fact matching.

The article discloses the basic specification of the usage of coins in the decorative aims and provides information based on the sources which described the usage of the coins for the purpose of garments decoration. For the first time, we studied the parts of the garments and jewellery containing coins in their design. Coins possessed a certain set of symbolic functions and were subject to the general laws of garments semiotics.

Карине Базеян
Кандидат исторических наук, доцент

Ширакский центр арменоведческих исследований НАН РА
bazeyan60@yandex.ru

Григор Аганян
Институт археологии и этнографии НАН РА
aghanyan@mail.ru

МОНЕТА КАК УКРАШЕНИЕ В КОМПЛЕКСЕ ТРАДИЦИОННОЙ ОДЕЖДЫ ЖЕНЩИН БАРДЗР АЙКА И ШИРАКА

Ключевые слова: Бардзр Айк, Ширак, традиционный костюм, монета, налобник, шейные и нагрудные украшения.

В статье рассматривается историко-культурологическая составляющая монет в женском традиционном костюме историко-этнографической области Армении-Бардзр Айк-Ширака. Предметами рассмотрения являются головной убор, шейные и нагрудные украшения армянских женщин во второй половине 19-го – в начале 20-го вв., где, в качестве декоративного элемента, использовались золотые европейские, золотые и серебряные турецкие монеты, а также монетовидные жетоны из цветного металла.

Методология исследования включает общенаучные и частнонаучные методы, среди которых стоит выделить культурологический анализ. Источниками исследования послужили музейные материалы, а также рукописные воспоминания и свидетельства очевидцев. Научной новизной в рамках заданной темы является тематический подбор источников и информации, анализ и сопоставление фактов.

В статье раскрыта основная специфика использования монет в декоративных целях, приведены сведения на основе источников, которые описывали использование монет в целях украшения костюма. Впервые описаны части костюма и украшениия, в композицию которых включены монеты, которые обладали определенным набором знаковых функций и подчинены общим закономерностям семиотики костюма.

Կարինե Բազեյան, Գրիգոր Աղանյան

ՄԵՏԱՂԱԴՐԱՄԸ ՈՐՊԵՍ ՁԱՐԴ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ԵՎ ՇԻՐԱԿԻ ԿԱՆԱՆՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏԻ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Նկար 1. – Արշակ Փեթվաճյան, Կարինցի կնոջ դիմանկար, ՀՊԹ, ԱԼ 607

Նկար 2. – Ախալցխացի կնոջ լուսանկար, ՀՊԹ, ԱԼ 303

Նկար 3 . Ալեքսանդրապոլցի Աննա Հովհաննիսյանը, ՀՊԹ. ԱԼ 308

Նկար 4.- ճակատնոց «ջուխտ շերիտ», ՀՊԹ, Ա 4716

Նկար 5. – Վզնոց, Ռուսաստանի ազգագրական թանգարան, 3598-31

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ